

ՍՏԵՓԱՆ ԼԻՍԻՑՅԱՆԸ ԹԱՐԳՄԱՆԻՉ

Լ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ստ. Լիսիցյանի լայն և բեղմնավոր գործունեության մեջ ուրույն տեղ ունեն տարբեր լեզուներից կատարած բազմաթիվ թարգմանությունները: Եվ եթե նրա գիտական, մանկավարժական, հրատարակչական գործունեությունը քիչ թե շատ ուսումնասիրվել է և պատշաճորեն գնահատվել¹, ապա թարգմանչականը մինչև օրս գրեթե չի լուսարձակվել: Նրա ուսումնասիրությունների այդ բնագավառին վերաբերող նյութերն ամփոփ կերպով, փաստորեն, առաջին անգամ են ներկայացվում գիտական հասարակայնության ուշադրությանը:

1884 թ. արժաթե մեդալով և «բազմակողմանի հարցասիրություն» գնահատությամբ Ստ. Լիսիցյանն ավարտում է Թիֆլիսի առաջին դասական գիմնազիան, որտեղ, ինչպես հայտնի է, մեծ տեղ էր տրվում հին լեզուների իմացությանը: Հաջորդ տարի նա ընդունվում է Նովոռոսիյսկի համալսարանի պատմա-բանասիրական ֆակուլտետը (Օդեսա): Այստեղ ուշադրության կենտրոնում էին լատիներենը և հունարենը, իսկ պատմությունը, որ Ստ. Լիսիցյանի նախասիրությունն էր, ուսումնասիրվում էր սեղմ դասընթացով, և նա երկու տարի սովորելուց հետո, 1887 թ. տեղափոխվում է Վարշավայի համալսարանի նույն ֆակուլտետը: Այստեղ նա կատարելապես տիրապետում է նաև լեհերենին: Հարկ է նշել, որ թե՛ Օդեսայում, թե՛ Վարշավայում Ստ. Լիսիցյանը շփվում է ռուս, ուկրաինացի, բելոռուս, լեհ և ալլազգի ուսանողների հետ: Այդ միջազգային միջավայրը գրական կնիք դրեց ապագա գիտնականի և մանկավարժի դեմոկրատական աշխարհայացքի ձևավորման ու տարբեր լեզուների իմացության վրա:

Այսպիսով, դասական կրթություն ստանալով նվրդալից, Ստ. Լիսիցյանը ազատ տիրապետում էր լատիներենին, հունարենին, սանսկրիտին, գերմաներենին, ֆրանսերենին, անգլերենին, լեհերենին, ռուսերենին, ուկրաիներենին, բելոռուսերենին, ինչպես նաև վրացերենին:

Թարգմանչական աշխատանքը Ստ. Լիսիցյանի համար երբեք ինքնանպատակ չի եղել, այն սերտորեն առնչվել է նրա գիտական, մանկավարժական, գրականագիտական և հրատարակչական գործունեությանը, կազմել դրանց անբաժան մասը: Նրա՝ տարբեր լեզուներից կատարած բազմաթիվ թարգմանությունները կարելի է բաժանել շորս հիմնական մասի. ա) ման-

1 4. Մ Ե Լ Ի Թ-Փ ա շ ա յ ա ն, Սովետահայ ազգագրության անցած ուղին (Ստ. Լիսիցյանի ավանդը հայ ազգագրության մեջ) (ՀՍՀՄ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1968, № 11, էջ 56—57), 2. Ղ ա տ ա ն. Կյանք՝ նվիրված իր ժողովրդին (Ստ. Լիսիցյան, Մաղաքադ, Ե., 1969, էջ 3—19), 3. Մ ա Ր տ Ի Ր Ո Ս յ ա ն, Սանփան Լիսիցյանը մանկավարժ, Ե. 1989, 4. Վ ա Ր Դ ա ն յ ա ն, Ստեփան Դանիլի Լիսիցյան (ծննդյան 125-ամյակի առթիվ), (ՀՍՀՄ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1991, № 4, էջ 42—47), Դ. Բ. Գ ա Ր Ի Բ Ժ ա ն յ ա ն, Н. С. Лисициан, Из истории русско-польско-армянских связей (Зарубежная литература) (АН АрмССР, Центр научной информации по общественным наукам, Е., 1987, № 4, с. 32—37); Լ. Մ. Վ ա Ր Դ ա ն յ ա ն, Степан Данилович Лисициан (1865—1947) (Советская этнография, 1986, № 6, с. 59—69); Степан Данилович Лисициан, Материалы к библиографии ученых Армянской ССР, № 41. Сост. Լ. Մ. Վ ա Ր Դ ա ն յ ա ն, Е., 1987; Լ. Մ. Վ ա Ր Դ ա ն յ ա ն, У истоков этнографического музееведения в Армении (Этнографическое обозрение, 1997, № 2, с. 133—138).

կական, բ) մանկավարժական-մեթոդական, գ) գիտական, դ) գեղարվեստական գրականություն: Սրանցից յուրաքանչյուրի ծավալն ու քանակը բավական տարբեր են և անմիջական կապ ունեն գիտականի գործունեության բազմակողմանի ոլորտների և որոշակի ժամանակաշրջանների հետ:

Հարկ է նշել, որ XIX դ. վերջում և XX դ. սկզբներում Ստ. Լիսիցյանը ցարական ոստիկանության հսկողության տակ էր, ուստի երկար ժամանակ նա ստիպված էր հանդես գալ տարբեր կեղծանուններով: Դրանց մի մասը կազմված էր նրա անուն-ազգանվան առաջին տառերից կամ կրճատ ձևերից, ինչպես օրինակ՝ Լ., Ս.Լ. կամ Ստ. Լիս. («Տարադ»-ում, «Մուրճ»-ում): Ուշագրավ է Լիսիցյանի անվան, հայրանվան և ազգանվան սկզբնատառերից կազմված Սադալյան կեղծանունը, որով ստորագրված է «Հասկեր»-ում հրատարակված հոդվածների մի մասը: Նրա կեղծանուններից են նաև՝ Պ.Կ.Ս., XXX և օր. Միհրուհի (հատկապես՝ «Աղբյուր»-ում): Նշված կեղծանուններով Ստ. Լիսիցյանը ստորագրում էր թե՛ տարբեր հոդվածներն ու գրախոսականները, և թե՛ մանկական պատմվածքներն ու թարգմանությունները՝ ընդհուպ մինչև խորհրդային կարգերի հաստատումը:

Թարգմանություններով և փոխադրություններով Ստ. Լիսիցյանը սկսել է զբաղվել տակավին երիտասարդ հասակից՝ առաջին հերթին դիմելով մանկական գրականությանը: 1883 թ. «Աղբյուր» ամսագրի էջերում նրա մի քանի մտնական պատմվածքների հետ միասին հրատարակվեցին նաև Աբֆոնս Էսկիրոսի «Երկու կղզի» և «Ուրիշի տունը քեզ բուն չի դառնալ (ծիծեռնակների կյանքից)» պատմվածքների փոխադրությունները: Ստ. Լիսիցյանը, ստեղծագործական վաղ շրջանում առավել մեծ տեղ ունեն մանկական պատմվածքների, վեպերի, հեքիաթների և մանկավարժական, մեթոդական գրականության թարգմանությունները: Ստ. Լիսիցյանն արդ շրջանում (1890—1920-ական թթ.) միաժամանակ «Տարադ» և «Աղբյուր» պարբերականների հիմնական աշխատակիցն էր, ապա՝ Լիսիցյանների գլխնազիայի տնօրեն, Ներսիսյան դպրոցի ուսուցիչ, «Հասկեր» մանկական ամսագրի խմբագիր և հրատարակիչ, Հովհ. Թումանյանի և Լ. Շանթի հետ նա կազմել և հրատարակել է մայրենի լեզվի՝ առաջինից-հինգերորդ դասարանների համար «Լուսաբեր» դասագիրքը: Այդուհանդերձ, մանկական գրականության բնագավառում իր թարգմանչական գործունեությունը Ստ. Լիսիցյանն ավելի ծավալեց հատկապես «Հասկերը», ապա «Լուսաբերը» հրատարակելիս: Տարբեր լեզուներից կատարած շուրջ քառասունի հասնող այդ թարգմանություններից և փոխադրություններից երկու խումբ են առանձնանում՝ ուս³ և ալլադդի⁴ գրականություն: Հարկ է նշել նաև Ստ. Լիսիցյանի՝ Ռ. Պատկան-

² Ուրիշի տունը քեզ բուն չի դառնալ (ծիծեռնակների կյանքից)՝ («Աղբյուր», 1888, № 1, էջ 5—8), Ալֆոնս Էսկիրոս, Երկու կղզի («Աղբյուր», 1883, № 11, էջ 378—382):

³ Ա. Չեխով, Օհանը (Հասկեր, Թիֆլիս, 1907, № 12, էջ 414—417), Վ. Կորոլենկո, Թաթախան իրիկուն (նույն տեղում, 1909, № 12, էջ 436—441), Լ. Անդրեև, Կծանը (նույն տեղում, 1909, № 2, էջ 78), Շչեպկին և Կուկուրնիկ, Թագուշը (նույն տեղում, 1911, № 10, էջ 176—181), Դ. Մամիկոն-Սիմիոյան, Մոծակն ու աղբը (նույն տեղում, 1906, № 12, էջ 392—399), Մեծ սիրտը (հեքիաթ) (նույն տեղում, 1907, № 1, էջ 33—40) և այլն:

⁴ Ֆ. Կրուսմանիս, Դուրմանտա թագավորը. Սողոմոնն ու Նաթանը, Հրաշք (Հասկեր, 1910, № 6—7, էջ 201—205), Զոհան Գուտենբերգ, Լեզենդ (նույն տեղում, № 9, էջ 232—234), Գ. Շվար, Արգոնավորդներ (Հունական ավանդություն), Թիֆլիս, 1910, Ի. Ֆրայան, Խնձորը (Հասկեր, 1910, № 10, էջ 274—277), Է. Սեմոն-Տոմպոն, Կախականչիկը. Մի նապաստակի պատմությունը, Թիֆլիս, 1910: Անդրեյ Սեմյոն, Այո և ոչ (Հասկեր, 1911, № 1, էջ 19), Ա. Բայի, Հայր և որդի (նույն տեղում, 1912, № 1, էջ 21—24), Մ. Կուրոմրի, Բռնա աղջիկը (նույն տեղում, 1900, № 2, էջ 70—76), Վ. Բլանկո-Բանիս, Պատը (նույն տեղում, 1915, № 6, էջ 187—190), Աղատություն (կոմեդիա երկու արարվածով), Թիֆլիս, 1913 և այլն:

յանի «Զախու» պատմվածքի փոխադրությունը նոր-նախիջևանի բարբառից, որը մի քանի անգամ վերահրատարակվեց մեր օրերում»⁵։

Ստ. Լիսիցյանի՝ մանկական գրականության թարգմանությունների հիմնական նպատակն էր հայ ընթերցողին և հատկապես մատաղ սերնդին ի մոտո ծանոթացնել համաշխարհային գրականության հարուստ ժառանգությանը, «Հասկեր»-ում զետեղված նրա պատմվածքների և թարգմանությունների լավագույն նմուշները հրատարակվեցին մեր օրերում»⁶։

Ինչպես հայտնի է, «Հասկեր»-ի անբաժան մասն էր կազմում «Մանկավարժական գրադարան» 26 գրքով հավելվածը։ Այստեղ արժարժված են մանկավարժության հիմնական խնդիրները, երեսանների հոգեբանության առանձնահատկությունները, նրանց ֆիզիկական, բարոյական և դեղագիտական դաստիարակության մեթոդներն ու ձևերը, ինչպես նաև դպրոցական գործի դրվածքը՝ Եվրոպայի առաջադեմ երկրներում։ Այդ գրքերը թարգմանություն են ունենում, փերմաներենից, լեհերենից և այլ լեզուներից, որոնց մեծ մասը կատարել է Լիսիցյանը⁷։ «Հասկեր»-ի հավելված «Մանկավարժական գրադարանը» զգալի դեր խաղաց մի ամբողջ սերունդ բարձրորակ մանկավարժական կադրեր պատրաստելու գործում։

Ստ. Լիսիցյանի՝ գիտական աշխատությունների թարգմանությունները թեև սակավթիվ են, բայց մեծ պատմագիտական և ճանաչողական արժեք ունեցող մենագրություններ են։ Դրանցից հարկ է նշել Լինչի «Հայաստան» հայտնի գրքի թարգմանության (անգլերենից ուսերեն) ունեցած նրա մասնակցությունը։ Պատահական չէր, որ փորձառու պատմաբան, ազգագրագետ, աշխարհագրագետ ու հրատարակիչ Ստ. Լիսիցյանը ճիշտ հասկացավ և բարձր գնահատեց այս գրքի՝ հայագիտության համար ունեցած կարևոր նշանակությունը։ Թե ինչքան մեծ էր Ստ. Լիսիցյանի ավանդը այդ մեծածավալ (1-ին և 2-րդ հատորը միասին՝ 1300 էջ՝ հագեցված բաղմամբ լուսանկարներով, քարտեզներով, հատակագծերով) և աշխատատար թարգմանչական գործում, որ գրքի պաշտոնական թարգմանիչ Ելիզավետա Ջունկովսկայան «Թարգմանչի կողմից» առաջարկում անհրաժեշտ է համարել շեշտել հետևյալը.

«Со своей стороны переводчик считает своим долгом благодарить за любезное содействие по изданию этого труда самого автора Х. Ф. Линча, а также нынешнего директора Кавказского музея в Тифлисе полковника А. Н. Казнакова и кандидата исторических наук С. Д. Лисициана, которые своими указаниями и представлением соответствующих материалов много помогли переводу».⁸

Ի դեպ, ասենք, որ գիրքը հատվածաբար հայերեն լույս տեսավ 1902 թ. Լոնդոնում՝ Պ. Տոնապետյանի, 1913—1914 թթ. Կ. Պոլսում՝ Լ. Լարենցի թարգմանությամբ։

Մեծ է Լիսիցյան թարգմանչի դերը գիտության նվաճումները ժողովրդականացնելու գործում։ Այդ ասպարեզում հատկապես ուշագրավ է նրա՝ հայ ընթերցողին ժամանակի առաջադեմ և լայն ճանաչում գտած դարվինյան տեսությունը հասու դարձնելու փորձը։ Դրանք են «Մուրճ»-ի էջե-

⁵ Լ. Պ ա ա կ ա ն յ ա ն, Զախու, Թիֆլիս, 1906, այնուհետև՝ Ե., 1983։

⁶ Ստ. Լիսիցյան, Մաղկաբաղ, Կազմեց և առաջարկեց գրեց Հ. Ղաչոյանը, Ե., 1969։

⁷ Ի. Ա. Սիվոսկի, Մանկան հողմ, Թիֆլիս, 1908, Կ. Ելենիցկի, Սովորությունները, նրանց նշանակությունը և կրթությունը, Թիֆլիս, 1906, Լ. Տոլստոյ, Ազատություն և բռնազատությունը դպրոցում (Մտքեր կրթության մասին), Թիֆլիս, 1907, Ի սահմանում, Մեծերն ու փոքրերը, Թիֆլիս, 1906, Ինչն է հետաքրքրում և զարգացնում մանկան (Ընդլամբ. Ա. Արստալ), Թիֆլիս, 1907, Բ ու լ լ լ, Ն ի լ ս ե ն, Տղան և աղջիկը անցողական հասակում, Թիֆլիս, 1907, Գ ա լ ա ն գ ա ու է ռ, Որտեղից աշխարհ եկավ քո չղբալը, Թիֆլիս, 1906 և այլն։

⁸ Х. Ф. Линч, Армения. Путевые очерки и этюды, т. 1, Тифлис, 1910, с. 2.

րում (1903 թ.), իսկ հետո՝ 1904 թ. առանձին գրքով Թիֆլիսում լույս տեսավ Ա. Ուոլլեսի «Հրաշալի դար» աշխատությունը՝ Ստ. Լիսիցյանի թարգմանությամբ⁹, առաջաբանով և մեկնաբանություններով։ Ալֆրեդ Ռոսել Ուոլլեսի (Wallace) անունը, — գրում է նա, — սերտ կերպով կապված է դարվիականության պատմության հետ։ Դարվիսն ու նա փառավոր հիմնադիրներն են այն արդյունավետ տեսությունները, որը ոչ միայն հեղաշրջեց կրթված մարդկության բնապատմական հայացքները, այլև բոլորովին նոր ճանապարհ բացեց բնական գիտությունների հետազոտության համար։ Ուոլլեսի պես մի առաջնակարգ գիտնականի քննական ուսումնասիրությունը 19-րդ հարյուրամյակի գիտական և հասարակական արդյունքների մասին ինքնրստինքյան կարևոր նշանակություն ունի, ուր մնաց, որ այդ գիտնականը անձամբ ակնատես և նպատակամատույց է եղել այդ ժամանակամիջոցի անընդհատ առաջադիմությունը¹⁰։ Ստ. Լիսիցյանը նշում է նաև այն հետաքրքրական փաստը, որ այդ անգլիացի հայտնի գիտնականը ընդհատարի (1848-ից) անխոչ հետազոտում էր Ամազոն և Ռիո-Նեգրո գետերի ափերը, այնուհետև ութը տարի շրջում Մալակայից մինչև նոր Գվինեա, անցնելով Մալայան կղզախմբի մեկ կղզուց մյուսը, գրի առնելով մոտ 75 վայրենարևակ ցեղերի բարբառները, շափելով նրանց գանգերը, հավաքելով մոտ 125 հազար բնագիտական իր՝ կենդանաբանությունից, բուսաբանությունից և երկրաբանությունից։ Դեռ Բորնեո կղզում գտնված ժամանակ նա եկավ այն եզրակացության, որ բուսական և կենդանական տեսակների բազմաճյուղի առնչված է բնական ընտրության օրենքի հետ և որ ամեն մի տեսական անսահմանորեն ձգտում է շեղվելու իր սկզբնական տիպից¹¹։

Նույն տեսությամբ Ստ. Լիսիցյանը դիմեց նաև ավելի ուշ։ 1931 թ. Մոսկվայում ԽՍՀՄ ժողովուրդների կենտրոնական հրատարակչության կողմից հայերեն լույս տեսավ Կ. Տիմիրյազևի «Դարվիսը և նրա ուսմունքը» աշխատությունը՝ Ստ. Լիսիցյանի թարգմանությամբ¹²։ Այս գրում, բացի Զ. Դարվիսի բուն ուսմունքի համառոտ վերլուծությունից, զետեղված են նաև զոքի երկրորդ (1882), հինգերորդ (1905) և ութերորդ (1919) հրատարակությունների համար Կ. Տիմիրյազևի գրած առաջաբանները, «Դարվիսը որպես գիտնականի տիպար», «Ժամանակակից բնագիտության մեջ Դարվիսի կատարած հեղաշրջման նշանակությունը» և «Զարգ Դարվիսը և դարվիզմի հիսնամյա հանրագումարը» հոդվածները։

Ուշագրավ է այս աշխատության առաջաբանը, որտեղ հեղինակը՝ Ստ. Լիսիցյանը, համառոտ և բարձր մակարդակով ներկայացնում է Կ. Տիմիրյազև-գիտնականի ու քաղաքացու կյանքը և ներդրումը գիտության մեջ։ Նա Տիմիրյազևին համարում է գիտական աշխարհի, գիտական մտքի «ամենապայծառ», ամենաառաջավոր դեմքերից մեկը, Դարվիսի ուսմունքի լավագույն ժողովրդականացնողն ու «զարկ տվողը»՝ աշխատությունը որակելով որպես «փայլուն և կլասիկ դարձած գործ»։ «Դժվար է մի հակիրճ առաջաբանում, — նշում է Լիսիցյանը, — անգամ համառոտ գծերով բնորոշել Տիմիրյազևի կյանքն ու գործունեությունը, հաշվել այն գանձերը, որ նա մոծել է բնական գիտությունների գանձարանը։ Տիմիրյազևի «Բույսի կյանքը» և «Դարվիսը և նրա ուսմունքը» գործերը մինչև այժմ էլ մնում են գիտական գրականության մեջ որպես Դարվիսի ուսմունքի լավագույն շարադ-

⁹ Ա. Ռ. Ուոլլեսի, Հրաշալի դար, Տասնիններորդ դարի դրական և բացասական կողմերը (Մոսկ, 1903, № 1, էջ 1—32, № 3, էջ 33—64, № 4, էջ 65—80, № 5, էջ 81—96, № 6, էջ 97—128, № 7, էջ 129—144, № 8, էջ 145—160, № 9, էջ 161—192, № 10, էջ 192—224, № 11, էջ 225—240, № 12, էջ 241—259), տե՛ս նաև՝ Թիֆլիս, 1904։

¹⁰ Ա. Ռ. Ուոլլեսի, նշվ. աշխ., էջ 5։

¹¹ Նույն տեղում։

¹² Կ. Տիմիրյազևի, Դարվիսը և նրա ուսմունքը, Մոսկվա, 1931։

բումն ու զարգացումը և թարգմանված են բոլոր եվրոպական ու այլ լեզուներով»¹³,

4. Տիմիրյազևի աշխատության հետ միաժամանակ Ստ. Լիսիցյանը թարգմանել է նաև Ն. և Դ. Լուրցկինների «Կենդանիների ու մարդու հոգին» գիրքը¹⁴։ Այս մենագրության հիմքում նույնպես ընկած է Դարվինյան տեսությունը։ Դա կյանքի և մասնավորապես կենդանական աշխարհի զարգացման ուսումնասիրությունն է, որտեղ մանրամասնորեն ներկայացված է «կենդանական սանդղեքը»՝ ամենապարզագույններից մինչև բարձրագույն կենդանիների աստիճանական զարգացման փուլերը, ցույց է տրված մարդու և կենդանիների բնագործի, պայմանական և անպայման ռեֆլեքսների, ինչպես նաև նյարդային համակարգի նշանակությունը։ Այս գրքի թարգմանությունը թե՛ գիտական և թե՛ ճանաչողական մեծ արժեք ունեցավ հայ ընթերցողի համար։

Դրեթե նույն ժամանակ, 1927 թ., Ստ. Լիսիցյանի թարգմանությամբ հրատարակվեց մի այլ գիտական ուսումնասիրություն՝ Ա. Պ. Նեչաևի «Ստորերկրյա ուժերի աշխատանքը»։ Բնագիտական մատենաշարին պատկանող այս գիրքը նվիրված է հրաբուխների ժայթքումների և երկրաշարժերի հետազոտությանը, դրանց ծագման և առաջացման պատճառներին, դասակարգմանը, հրաբխային և սելյամիկ երևույթների վրա արևի և լուսնի ազդեցությանը, ինչպես նաև ամենանշանավոր հրաբխային ժայթքումների՝ Վեզուվի և Մարտինիկա կղզում (1902) տարերքի պատմությանը և մանրամասն նկարագրությանը¹⁵։ Այս լեռնաբանական ուսումնասիրության թարգմանությունը պատահական չէր Ստ. Լիսիցյանի համար։ Դա նրա բեղմնավոր և բազմակողմանի գործունեության այն շրջանն էր, երբ Թիֆլիսից տեղափոխվել էր Երևան (1924 թ.) և դասավանդում էր Երևանի համալսարանի աշխարհագրության ֆակուլտետում։ Միաժամանակ (1925—1928 թթ.), ծավալելով լայն գավառագիտական աշխատանք, ղեկավարում էր ՀՍՍՀ Լուսժողովոմատի կենտրոնական գավառագիտական բյուրոյի գործունեությունը։

Դեղարվեստական գրականության թարգմանությամբ Ստ. Լիսիցյանը ևկսել էր զբաղվել տակավին 1890-ական թթ.՝ «Տարազ» ամսագրում աշխատելու տարիներին։

1893 թ. «Տարազի» էջերում, ապա առանձին գրքույկով (Գաբր. Միրդոյանի և Ս. Լիսիցյանի հրատարակությամբ) լույս տեսավ Կովերսկայի «Կազետ» վիպակը՝ Ստ. Լիսիցյանի՝ լեհերենից հայերեն թարգմանությամբ, որը նրա առաջին փորձն էր¹⁶։ Այս վիպակը Կազետ անունով 8-ամյա որբ, համեստ ու աշխատասեր, խորթ ծնողների հետ գերմանական Պոզնան քաղաքում ապրող լեհ աղջկա տիտուր ու հուզիչ պատմությունն է։

Լեհերենից Ստ. Լիսիցյանը հայերեն է թարգմանել նաև Պոզնանի իրականությունը և մասնավորապես տեղի գերմանական դպրոցում տիրող դաժանությունն ու ժանդարմական կարգապահությունը բնութագրող մի ուռիչ ստեղծագործություն՝ Հ. Սենկևիչի «Պոզնանի ուսուցչի հիշատակարանից» նովելը¹⁷։

Ինչպես նշվել է, «Պոզնանի ուսուցչի հիշատակարանից» նովելի հիմքում ընկած հիմնական խնդիրը տեղային՝ լեհականից բացի, տվյալ դեպքում ուներ նաև «հայկական» հնչեղություն. խոսքը վերաբերում է ազգա-

13 Նույն տեղում, էջ 5։

14 Ն. և Գ. Լուրցկինների, Կենդանիների և մարդու հոգին, Մոսկվա, 1930։

15 Ա. Պ. Նեչաև, Ստորերկրյա ուժերի աշխատանքը, Ե., 1927։

16 Կովերսկայ, Կազետ (Տարազ, 1893, № 9, էջ 134—139, № 10, էջ 146—153), տե՛ս նաև՝ Թիֆլիս, 1893։

17 Հ. Սենկևիչ, Պոզնանի ուսուցչի հիշատակարանից (Մուրճ, 1901, № 1, էջ 111—130)։

ու մանրանկարների մեջ պատկերացրեց նոր աշխարհի (Միացյալ Նահանգներին) բնավորությունն այնպես, ինչպես որ նրանք կան, ստեղծագործական խորին ճշմարտությամբ²³։

Գրքում ներկայացված պատմական իրադարձությունները վերաբերում են Ամերիկայի գաղութների մայր-երկրի՝ Անգլիայի դեմ հանուն ազատության տարվող պատերազմին (1778 թ.)։

Ստ. Լիսիցյանը թարգմանել է նաև Բ. Հարտի «Միս» պատմվածքը²⁴։ Միսը Կալիֆոռնիայի գաղութներից մեկում ապրող, վաղուց մորից զրկված, ապա հարբեցողության հոգի վրա ինքնասպանություն գործած Սմիտի դուստրն է՝ հասարակության կողմից լքված, չերմ վերաբերմունքի և գուրգուրանքի կարոտ երեխան։ Մեծ վարպետությամբ և նրբությամբ Բ. Հարտը մի փոքր պատմվածքի միջոցով բնորոշեց Կալիֆոռնիայում «ոսկու տենդին» ժամանակաշրջանում տիրող անգութ, անհոգի և բիրտ բարքերը։

Իր երկարամյա, բազմակողմանի ու բեղմնավոր գործունեության հասուն տարիներին՝ 1930-ական թվականներից սկսած, Ստեփան Լիսիցյանը լիովին նվիրվեց հայագիտությանը (հատկապես ազգագրությանը և աշխարհագրությանը) ու մանկավարժությանը։ Սակայն նրա՝ նաև այդ բնագավառին մատուցած ծառայությունը ցարդ չի կորցրել այժմեականությունը։

СТЕПАН ЛИСИЦИАН — ПЕРЕВОДЧИК

Л. М. ВАРДАНИЯН

Р е з ю м е

В многогранном наследии известного ученого и педагога Степана Даниловича Лисициана до сих пор практически неизученной осталась его переводческая деятельность. Будучи разносторонне и глубоко образованным человеком, активным сторонником и пропагандистом всего нового в науке и культуре, Ст. Лисициан посредством переводов стремился приобщить армянского читателя к передовым идеям и теориям своего времени. Свободно владея двенадцатью языками, Ст. Д. Лисициан осуществлял многочисленные переводы из научной, педагогической, художественной и детской литературы. Многие переводы он сам же и издавал. Среди них труды Х. Линча, К. Тимирязева, И. Сикорского, К. Ельницкого, произведения Г. Сенкевича, А. Уоллеса, Б. Гарта, рассказы А. Чехова, В. Короленко, Л. Андреева, Ф. Крумахера, И. Гутенберга, Э. Сэтон-Томпсона и многие другие.

²³ Բ ր է տ շ ա ր տ, Նշվ. աշխ., էջ 3—4։

²⁴ Բ ր է տ շ ա ր տ, Միս, Թիֆլիս, 1910։